

վաքվի, հավաքը կատարվում է գիշեր ու ցերեկ: Դրանց արժեքը վճարվում է փաղիշահական գանձարանից, այնպես որ սեփականություն իրավունքը չի խախտվում, սակայն եթե պատերազմ չլինի, ուսլաից սյուրսաթ գանձել չի կարելի, արգելված է»¹:

Այստեղ խոսվում է վերցված ապրանքի արժեքը պետության կողմից փոխհատուցելու մասին, սակայն պրակտիկայում «հաճախակի ապրանքի արժեքը չէր վճարվում»²:

Մինչև այժմ նշված հարկերը համարվում են «օրինական», այսինքն շարիաթին համապատասխան: Այս «օրինական» հարկերի հիման վրա, հետագայում ալլեալ անուններով առաջացավ հարկերի մի ամբողջ սիստեմ: Այսպես, հողային հարկը հանդես էր գալիս «ռեսմի չիֆտ», «ռեսմի դյունյում»³ անուններով՝ մուսուլմանների համար և «ռեսմ ի բաղ», «ռեսմ ի բոստան», «ռեսմ ի բախշա», «ռեսմ ի բեննակ», «ռեսմ ի 'ասիապ», «ռեսմ ի մելրաբի», «ռեսմ ի վեշտրանի» և այլն բոլոր հպատակների համար: Շարունակվում են գանձվել դեռ նախորդ դարերում գոյություն ունեցող այնպիսի հարկեր, ինչպիսիք են՝ «բահրան», «սալարիեն», «'ալաֆեն» և «ուլուֆեն», որը Թուրքիայում կոչվում էր նաև «ռեսմ ի 'ալաֆ»: Բացի այս բոլորից, ֆեոդալների (սիպահիների), ինչպես և պետական պաշտոնյաների կողմից գանձվում էին բազմաթիվ ու բազմապիսի հարկեր, այլ անուններով, որոնք կանուն-նամահներում հայտնի են «բիդ'ատ» (bid'at) անվան տակ, որ արարերեն նշանակում է նորամուծություն, այսինքն շարիաթին չհամապատասխանող ու նրան հակասող⁴:

«Սալարիե» (Salâriye) — այսպես էր կոչվում հողատիրոջը տրվող բերքի մի մասը: «Սալար» պարսիերեն նշանակում է գլուխ, հրամանատար: Սալարիեն գանձվում էր «ուշր»-ի փոխարեն, ինչպես ոչ մուսուլմանից, այնպես էլ մուսուլման հպատակներից⁵:

«Ալաֆե և ուլուֆե» կամ «ռեսմ-ի ալաֆ» — արարերեն 'alaf բառից է, որը նշանակում է խոտ: Ինչպես ցույց է տալիս ինքը բառը, այս հարկը պարտադիր կարգով վերցվում էր ուսլաթից, պետական ծառայողների ու տնդի սիպահիների ձիերն ու անասունները կերակրելու համար: Եթե սկզբնական շրջանում հարկը վերցվում էր բնամթերքով (գարի, խոտ, հարդ և այլն), ապա հետագայում այն վերցվում էր գրամով: Ըստ Բիթլիսի կանուն-նամահի, որպես «ռեսմ-ի ալաֆ», յուրաքանչյուր անձից գանձվել է տարեկան վեցական ակչե⁶:

«Ռեսմ-ի բոստան» („Resm-i bostan“), ըստ 1583 թ. Տրապիզոնի կանունի, բանջարանոց ունեցող յուրաքանչյուր տնից որպես «ռեսմ-ի բոստան» գանձվել է երկուական ակչե⁷:

¹ A. C. Тверитинова, Второй трактат Кочибей, (Учёные записки института Востоковедения, 1953 г. VI том. стр. 245).

² M. Z. Pakalın, Osmanlı tarih deyimleri..., III cilt, XXI fas., İstanbul, 1955, s. 300.

³ «Դյունյում» („dönüm“) Թուրքական չափ է, որն հավասար է հասարակ քայլով 40 քայլ լայնության և քառասուն քայլ երկայնության (տե՛ս՝ Erzurum kanunu, s. 65).

⁴ «Բիդ'ատաների մասին, տե՛ս, Om. Lûtfi Barkan, Osmanlı Imperatorlugunda çiftçi sınıfların hukukî statüsü, Ջուրնալ „Ülkü“ 1937, cilt IX, s. 42.

⁵ Տե՛ս, Kanun-nâme-i İiva-i Divrigi, s. 118, Gürcistan kanun-nâmesi, s. 198. Erzurum kanunu, s. 65.

⁶ Vilayet-i Bitlis kanunu, s. 192.

⁷ Trabizon kanunu, s. 58.